ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«____» _____ 2023 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 6-ի «Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման առաջին միջոցառման մասին» N 51-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված N 2 հավելվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.2-րդ կետ.

«8.2. Սույն կարգի 2-րդ և 8-րդ կետերի կիրառման առումով՝ 2022 թվականի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացված չլինելու կամ սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում բացառապես զրոյական ցուցանիշներով հարկային մարմին ներկայացված լինելու դեպքում հիմք է ընդունվում մինչև 2023 թվականի փետրվարի 7-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված 2022 թվականի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Որոշման 8.2-րդ կետի պահանջները բավարարող շահառուները որոշման 9-րդ կետով սահմանված դիմումները հարկային մարմին են ներկայացնում թղթային տարբերակով՝ մինչև 2023 թվականի մայիսի 15-ը ներառյալ:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ